ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի դոցենտ,
աշխարհագրական գիտությունների թեկնածու

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ

Հոդվածում քննարկվում են շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիական ուղղվածությամբ պլանավորման հարցերը: Ներկայումս մարդկությունը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև, որոնց թվում կան բնապահպանական ու սոցիալ-տնտեսական կայուն զարգացման խնդիրներ: Տարածաշրջանային կայուն զարգացման ուղիներն ընտրելու համար անհրաժեշտ է տարածքի բնական պաշարների ներուժի, էկոլոգիական և սոցիալ-տնտեսական պայմանների ճիշտ գնահատում, որին կհաջորդի հողօգտագործման արդյունավետացման հնարավոր տարբերակների և դրանց իրականացման միջոցառումների շարքը: Որպես կայուն զարգացման պլանավորման գործիքակազմ կարող են ծառայել լանդշաֆտային պլանավորման մեթոդական հնարքները, որոնց ամբողջությունը կիրառվում է հասարակության գործունեության տարածական կազմակերպումը որոշակի լանդշաֆտներում իրականացնելու համար՝ ապահովելով այդ լանդշաֆտների բնական ռեսուրսների կայուն օգտագործումն ու դրանց հիմնական գործառույթների՝ որպես կյանքի ապահովման համակարգերի պահպանումը: Բացի այդ, լանդշաֆտային պլանավորումը հաղորդակցական գործընթաց է, որում ներգրավվում են պլանավորվող տարածքում բնապահպանական և տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները, որպեսզի բացահայտվեն նրանց հետաքրքրությունների շրջանակը, բնօգտագործման հիմնախնդիրները, բախումների լուծումը և ազդեցությունների ու միջոցառումների համաձայնեցված պլանը: Հետևաբար՝ հատուկ արդիականություն են ստանում շրջակա միջավայրի պահպանության և էկոլոգիապես հիմնավոր պլանավորման հարցերը, որոնք արտահայտվում են լանդշաֆտային պլանավորման համատեքստում:

Հիմնաբառեր. *լանդշաֆտային պլանավորում, լանդշաֆտային ծրագիր, լանդշաֆտային շրջանակային պլան, լանդշաֆտային պլան, կանաչ պլան*

JEL: Q00, Q50
DOI: 10.52174/1829-0280_2021_2_78

Ներածություն: Բնության պահպանության ոլորտում հիմնարար որոշում կայացնելու համար անհրաժեշտ է բացահայտել բնամարդածին լանդշաֆտներում կատարվող էկոլոգիական փոխազդեցությունները: Լանդշաֆտների վրա վտանգավոր ազդեցություն և ծանրաբեռնվածություն ունեցող տեղամասերի առանձնացման ու հնարավոր նոր սպառնալիքների նախազգուշացման համար պահանջվում է բնության ներկա վիճակի ու կանխատեսվող փոփոխությունների, ինչպես նաև բնական միջավայրի կորցրած որակի վերականգնման հնարավորությունների մասին համապարփակ իմացություն: Հետևաբար՝ լանդշաֆտային պլանավորման շրջանակներում բնակչությունը, մասնագետ պլանավորողները և զարգացման քաղաքականություն մշակողները ստանում են լանդշաֆտների կառուցվածքի, բնական գործընթացների, սոցիալ-տնտեսական իրավիճակի, էկոլոգիական հիմնախնդիրների ու դրանց կարգավորման հնարավորությունների վերաբերյալ բազմակողմ տեղեկատվություն: Այդ պարագայում լանդշաֆտային պլանավորումն ընդլայնում է բնության ու լանդշաֆտների մասին իմացությունը՝ բարձրացնելով մասնագետ պլանավորողների կարողունակությունը զարգացման ինտեգրված նպատակների մշակման ու գործողությունների ծրագրերի ընտրության գործընթացում:

Շատ դեպքերում վտանգավոր ազդեցություններին բնության հակազդման հնարավորությունների նշանակալի նվազումը պայմանավորված է ոչ այնքան մարդածին առանձին ներգործությամբ, որքան դրանց հանրագումարով: Հետևաբար՝ մարդածին բազմաթիվ ազդեցությունների առկայության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ կոնստելացիան ունենում է սիներգիկ արդյունք, և ձևավորվում են էմերջենտ հատկությամբ բնամարդածին լանդշաֆտներ, որոնց համար պետք է իրականացնել կանխատեսող ու համակարգող պլանավորում:

Գրականության ակնարկ: Լանդշաֆտային պլանավորումը, որպես տարածքային պլանավորման գիտության ճյուղ, ձևավորվել է Գերմանիայում, իսկ զարգացումը սկսվել է 19-րդ դարի սկզբին՝ «հողերի բարելավումից» և «հողերի խնամքից»: 1976 թ. Գերմանիայի դաշնային օրենքում լանդշաֆտային պլանավորումն առաջին անգամ ամրագրվել է իրավաբանորեն՝ որպես լանդշաֆտի պահպանության պլանավորման գործիք[1]: Լանդշաֆտային պլանավորման կայուն զարգացումը Գերմանիայում հանգեցրեց երկրի մակերեսի 26,9%-ի բնության պահպանվող տարածքներ լինելուն:

Ներկայումս լանդշաֆտային պլանավորման գործիքը լայնորեն կիրառվում է Եվրոպական միության անդամ երկրների տարածքային պլանավորման և տարածաշրջանային քաղաքականության մշակման մեջ: Վերջին ժամանակներում ձևավորված սկզբունքները և մեթոդները լանդշաֆտային պլանավորումը դարձրել են բնության պահպանության կարևոր և թափանցիկ գործիք:

Սկսած 1994 թվականից՝ լանդշաֆտային պլանավորման գործիքը լայնորեն կիրառվում է նաև Ռուսաստանի Դաշնությունում: 1994–2004 թթ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրի մասնաճյուղի աշխարհա-

---

[1] Տե՛ս Haaren C.V., Galler C., Ott S., Landscape planning. The basis of sustainable landscape development. 2008, էջ 6:

գրության ինստիտուտը Գերմանիայի Դաշնության շրջակա միջավայրի պահպանության գործակալության աջակցությամբ և գերմանական փորձի հիման վրա մշակել է մեթոդաբանություն, որի արդյունքները փորձաքննություն են անցել Մերձբայկալի տարածաշրջանի պահպանվող տարբեր տարածքների համար: Առաջին անգամ Ռուսաստանում մշակվել է Բայկալի բնապահպանական գոտևորման սխեման 1:1000000 մասշտաբով, որն ընդգրկում էր ավելի քան 350000 քառ. կմ տարածք: Դա դարձավ «Բայկալ լճի պահպանության մասին» ՌԴ օրենքի կիրարկման առաջին փորձը: Ստեղծվել են լանդշաֆտային շրջանակային պլաններ՝ Սլուդյանսկ-Իրկուտսկի, Սելենգա և Վերին Անգարա գետերի դելտաների, Անդրբայկալյան ազգային պարկի համար, պատրաստվել են լանդշաֆտային պլաններ մի շարք մոդելային տեղամասերի համար (1:25000 մասշտաբի)[2]: Ռուսաստանում նպատակային են համարում կիրառել տարբեր օրենքներ, որոնք արտացոլում են տարածքային կազմակերպման ճյուղային սկզբունքը, առաջին հերթին՝ ՌԴ ջրային, հողային, քաղաքաշինական և անտառային օրենսգրքերը: Այսպիսի մոտեցումը բարձրացնում է լանդշաֆտային պլանավորման արդյունավետությունը և պատասխանատվությունը որպես հիմք՝ բնակավայրերի տարածքների գոտևորման մեջ քաղաքաշինական որոշումներ կայացնելու համար, համայնքների զարգացման ռազմավարական պլաններ կազմելիս, հատուկ պահպանվող բնական տարածքների կազմակերպման և տնտեսական օբյեկտների նախագծման ժամանակ, բնապահպանական փաստաթղթեր մշակելիս՝ հատկապես տարածքում դրա արդյունավետ տեղադրման վայրի ընտրության առումով: Թվարկված մշակումները շատ դեպքերում ինքնատիպ են: Ռուսական փորձը հիմնվում է լանդշաֆտային պլանավորման և ճյուղային խնդիրներում դրա գործիքների կիրառման գերմանական մշակումների վրա: Դա թույլ է տալիս էականորեն մոտեցնել լանդշաֆտային պլանավորումը բնապահպանական միավորին և բնակչության գիտակցությանը, ձևավորել մշակվող փաստաթղթերի մասնակցային սկզբունքի կիրառման ավելի բարձր մակարդակ:

Գերմանիայի Դաշնության շրջակա միջավայրի պահպանության գործակալության աջակցությամբ Հարավային Կովկասի երկրներում 2007–2008 թթ. իրականացվել է ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության նպատակն էր Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում փորձարկել լանդշաֆտային պլանավորումը, որը կարող է օժանդակել տարածաշրջանային ու քաղաքաշինական պլաններին, բնության հատուկ պահպանվող տարածքների առանձնացմանը և հիմնավորմանը, ինչպես նաև ամենատարբեր ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության փորձաքննությանը:

Հարավային Կովկասի երկրներում լանդշաֆտային պլանավորման գործիքների կիրառմամբ մշակվել են լանդշաֆտային ծրագիր Աջարիայի (Վրաստան), լանդշաֆտային շրջանակային պլան Սևանի ջրհավաք ավազանի (Հայաստան) և լանդշաֆտային պլան «Շիրվան» ազգային պարկի համար (Ադրբեջան): Մոդելային տեղամասերի ընտրության ժամանակ հաշվի են առնված լանդշաֆտային պլանավորման տարբեր մակարդակներն ու

---

[2] Տե՛ս Ландшафтное планирование для стран Южного Кавказа. Иркутск: Издательство Института географии им. В.Б. Сочавы СО РАН, 2008, էջ 4:

մասշտաբները, ինչպես նաև կիրառման բովանդակային տիրույթը: Հարավային Կովկասի երկրներում լանդշաֆտային պլանավորման գործիքների կիրառումը եղել է արդյունավետ: Մոդելային տարածքների սահմաններում պահպանության և սոցիալ-տնտեսական զարգացման գոտիների առանձնացումն էականորեն մեծացնում է այս տարածքների կայուն զարգացման հնարավորությունները[3]:

Հայաստանը, 2004 թվականին վավերացնելով Լանդշաֆտի եվրոպական համաձայնագիրը, ստանձնել է բնական և մարդածին լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացի իրականացման պարտավորությունը: Վերջինիս կատարման համատեքստում ՀՀ Կառավարությունը 2012 թ. մշակել է Հայաստանում լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման ռազմավարություն[4]: Մշակվել է նաև Լանդշաֆտի եվրոպական համաձայնագրից բխող՝ ՀՀ պարտավորությունների կատարման 2011–2012 թթ. միջոցառումների ցանկը[5]:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածում դիտարկվել են տարածքի լանդշաֆտային պլանավորման հարացույցին հատուկ տեսամեթոդական բնույթի խնդիրներ, որոնց լուծման համար հիմնական տեղեկատվական աղբյուր են հանդիսացել բազմաթիվ հեղինակների աշխատությունները, լանդշաֆտային պլանավորմանն առնչվող ՀՀ իրավական ակտերն ու արտասահմանյան գիտական կազմակերպությունների հետազոտությունները: Ուսումնասիրությունը կատարվել է բնապահպանության ոլորտում լանդշաֆտային պլանավորման գործիքների կիրառման հնարավորությունների բացահայտման ու վերլուծության դիալեկտիկայի սկզբունքով, որի համար որպես մեթոդաբանական հիմք են ծառայել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի հիմնարար դրույթները, տարածքային բնահասարակական երկրահամակարգերի տեսությունը, ինչպես նաև աշխարհագրական թաղանթի էվոլյուցիայի սիներգետիկ ընդհանուր գիտական հայեցակարգը:

Հոդվածում կիրառվել են համակարգային, տարածաժամանակային, գեոէկոլոգիական ու հիմնախնդրային մոտեցումներ, օգտագործվել են վերլուծության, համադրման և աշխարհատեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) մեթոդներ:

Համակարգային ու տարածաժամանակային մոտեցումների միջոցով բնահասարակական երկրահամակարգերը դիտարկվել են որպես ամբողջական տարածքային գոյացություններ, որոնք զարգանում են բնության էվոլյուցիայի և հասարակության գործունեության ազդեցությամբ: Բնահասարակական երկրահամակարգերի կարևոր հատկանիշներն են ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ենթակարգությունը, էմերջենտությունը, կայունությունը, տարածականությունը և հարաշարժությունը, որոնք համակարգային մոտեցմամբ լայնորեն կիրառվում են լանդշաֆտային պլանավորման մեջ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և տարածքի զարգացման ընդհանուր պլանների ու ծրագրերի կազմման ժամանակ: Լանդշաֆտային պլանավորման ընթացքում միջավայրի օբյեկտների ու երևույթների միա-

---

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս http://www.irtek.am/views/act.aspx?aid=67114

[5] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66853

ժամանակյա դիտարկումը տարածության և ժամանակի մեջ հնարավորություն է տալիս բացահայտելու դրանց գործունեության ու զարգացման բնույթն ու միտումները, պարզելու ոչ միայն երևույթների արտաքին տեսքն ու ձևը, այլև ներքին ինքնազարգացման գործընթացները:

Գեոէկոլոգիական մոտեցմամբ դիտարկվել են հասարակության, տնտեսության և շրջակա միջավայրի փոխազդեցության գործընթացները: Այս մոտեցմամբ լուսաբանված է լանդշաֆտային պլանավորման դերը բնական միջավայրի պահպանության և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ու գնահատման մեջ:

Լանդշաֆտային պլանավորման օբյեկտ համարվող տարածքը տարասեռ և տարաբնույթ հիմնախնդիրների արտահայտողն ու կրողն է, որոնց բացահայտման և լուծման համար կիրառվել է հիմնախնդրային մոտեցումը: Այս մոտեցմամբ բացահայտվել են տարածական համակարգերի էվոլյուցիայի պատճառները և հակասությունները, իրականացվել է իրավիճակի կանխորոշում: Լանդշաֆտային պլանավորման համատեքստում, հիմնախնդրային մոտեցման հիմնական սկզբունքների օգնությամբ, գիտական որոնման արդյունքում որոշվել են սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հիմնախնդիրների սրված հակասությունների լուծման ուղիները:

Վերլուծման ու համադրման մեթոդներով իրականացվել է լանդշաֆտային պլանավորման գործիքակազմի կիրառելիության համալիր վերլուծություն՝ ըստ միջազգայնորեն ընդունված չափանիշների ու իրավահարաբերությունների: Վերլուծությունը կատարվել է՝ հաշվի առնելով լանդշաֆտային պլանավորման օբյեկտին հատուկ ներքին և արտաքին պատճառական կապերն ու հարաբերությունները, դրանց տարբեր հատկանիշները: Համադրմամբ ստացվել են լանդշաֆտային պլանավորման օբյեկտի զարգացման ինտեգրված նպատակները:

Աշխատանքի հետազոտական խնդիրներից են բնության բաղադրիչների գնահատումն ու թեմատիկ քարտեզների կազմումը, որ իրականացվել են ԱՏՀ օգտագործմամբ: ԱՏՀ-ի միջոցով մշակված քարտեզներում բնության բաղադրիչների նշանակության և զգայունակության շերտերի համադրմամբ առանձնացվել են տարածքների օգտագործման նպատակները, գործողություններն ու նպատակային միջոցառումները:

Վերլուծություն: Լանդշաֆտային պլանավորման ընդհանուր նպատակն է հողօգտագործման բարելավման համար էկոլոգիական կողմնորոշմամբ կազմակերպչական պահանջների մշակումը, որում հաշվի են առնվում տարածքի զարգացման գերակայությունների զուգակցումն ու կարգաբանությունը: Տարածքի մանրամասնորեն մշակված լանդշաֆտային պլանավորումը գործիք է հասարակության կյանքի էկոլոգիապես անվտանգ և նպատակահարմար կազմակերպման համար, որի գլխավոր նպատակն է բնական ներուժի վերարտադրության երկարաժամկետ երաշխիքի ապահովումը: Լանդշաֆտային պլանը բարդացող համալիր փոխազդեցությունների գործընթացում պետք է ապահովի բնական միջավայրի պահպանությունը՝ ներառելով կենսաբաղադրիչը մեխանիկական, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործընթացների ամբողջ բազմազանությամբ:

Լանդշաֆտային պլանավորման մեջ վերլուծության համար ամբողջ տարածքը դիտարկվում է որպես միատեսակ աստիճանի կարևորությամբ տա-

ռածքային ռեսուրս, որի համար մշակվում է տարածքային զարգացման ճյուղային նպատակների ամբողջական հայեցակարգ: Լանդշաֆտային պլաններում ծրագրված գործողությունների ու միջոցառումների հայեցակարգի միջոցով որոշվում են տարբեր տեսակի երկրահամակարգերի և դրանց վիճակի զարգացման անհրաժեշտ ուղղությունները: Պլանավորման ժամանակ այդպիսի մոտեցման հիմնական նպատակն է մշակել տարածքի կայուն զարգացման ամբողջական հայեցակարգ, ինչպես նաև տեղական բնակչությանը տրվում է արժանավայել կյանքի իրավական երաշխիք:

Լանդշաֆտային պլանավորումը միջավայրի առանձին բաղադրիչները դիտարկում է ներքին կառուցվածքային կապերի ու համալիր փոխազդեցությունների մեջ՝ դրանով իր մասնակցությունն ունենալով տարածքի ընդհանուր պլանավորմանը: Դա պլանավորման միակ տեսակն է, որը համակարգայնորեն վերլուծում է շրջակա միջավայրի պահպանության հիմնական ուղղությունները՝ հստակ պատկերացում տալով դրանց տարածական ձևերի դրսևորման մասին[6]:

Լանդշաֆտային պլանավորումը ճյուղային պլանավորման այլ տեսակներին տալիս է կայուն հիմք շրջակա միջավայրի պահպանության գնահատման ու զարգացման միջոցառումների մշակման համար, որն էկոլոգիական փորձաքննության և շրջակա միջավայրի վրա ազդեցության կարգավորման ու գնահատման համար կիրառվող մասնագիտական էկոլոգիական գործիքների շարքում հիմնական ու առանցքային նշանակություն ունի: Լանդշաֆտային պլանավորումը հնարավորություն է տալիս ճյուղային պլանավորմանը նախապես ունենալու բնապահպանական պահանջներից բխող անհամաձայնությունների նախնական գնահատականը, ինչն էլ թույլ է տալիս հավանական բնօգտագործողներին ու ճյուղային պլանավորողներին տնտեսել ժամանակ ու միջոցներ: Դա նպաստում է ոչ միայն բնօգտագործման գործունեության համաձայնեցմանը, այլև մեղմացնում կամ բացառում է տվյալ ոլորտում առաջացող վեճերը՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ կայուն զարգացման համար:

Տարածքի ընդհանուր պլանավորման հանձնարարականում կարևորվում է մասնավոր կառուցապատողների ու տարածականորեն արտահայտված ազդեցություն ունեցող այլ կազմակերպությունների գործունեության համաձայնեցումն էկոլոգիական պահանջներին: Լանդշաֆտային պլանավորումն այդ համաձայնեցման համար տալիս է ազդեցության հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվական նյութեր և բոլոր բնօգտագործողներին կողմնորոշում համապատասխանեցնելու իրենց ծրագրերը շրջակա միջավայրի որակի երկարաժամկետ պահպանման պահանջներին՝ հաշվի առնելով էկոլոգիապես կայուն զարգացման չափորոշիչները:

Լանդշաֆտային պլանավորումն իրականացվում է տարբեր մասշտաբներով և տարածական մակարդակներով: Սա համաձայնեցվում է ընդհանուր տարածքային պլանավորմանը և, որպես ստորակարգային համակարգ, ընդգրկում է տարածքի զարգացման լանդշաֆտային ծրագրի մշակումը, լանդշաֆտային շրջանակային պլանի կազմումը, ստեղծում խոշորամասշտաբ լանդշաֆտային պլան և նախագծում բնակավայրերի կանաչ պլաններ:

---

[6] Տե՛ս Marsh W. M., Landscape planning: environmental applications, 5 td Edition, 2010, էջ 8:

Լանդշաֆտային պլանավորմանը մասնակցություն ունեցող հասարակության և տարածքային իշխանությունների ներկայացուցիչները, ելնելով տեղական լանդշաֆտների արժեքից ու էկոլոգիական փոխազդեցություններից, որպես կանոն, համաձայնության են գալիս բնության պահպանության խնդիրների շուրջ, փնտրում այդ խնդիրների լուծման ուղիներ: Նշված հանգամանքը թույլ է տալիս ամրացնել շրջակա միջավայրի պահպանության պահանջների և մարդկանց տնտեսական, սոցիալական ու մշակութային հետաքրքրությունների միջև փոխկապվածությունը՝ նրանց դրդելով հետևելու տարածաշրջանի կայուն զարգացման նպատակներին:

Լանդշաֆտային պլանավորման տարբեր մակարդակներում ձևավորված զարգացման նպատակները, գործողություններն ու միջոցառումները հասցեագրվում են իշխանություններին, որոնք իրականացնում են տարածքային զարգացման քաղաքականություն ու վերահսկողություն, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպություններին, որոնց գործունեությունն ուղղակիորեն ազդում է բնական լանդշաֆտների վրա (գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ***Լանդշաֆտային պլանավորումն ու բնության պահպանությունը***[7]

Լանդշաֆտային պլանավորումը վերլուծում է լանդշաֆտը՝ որպես մարդկանց ապրելավայր, և իրականացվում է տարբեր մասշտաբային մակարդակներում: Որպես կանոն, դրանք համապատասխանեցվում են վարչատարածքային բաժանման մակարդակներին: Ելնելով այդ սկզբունքից՝ Հայաստանի համար առաջարկվող լանդշաֆտային պլանավորումը պետք է իրականացվի չորս մակարդակով: Բնության պահպանության ու լանդշաֆտների խնամքի տեղական պահանջներն ու միջոցառումները ՀՀ մարզերի համար պետք է ներկայացվեն լանդշաֆտային ծրագրերում: Մարզերի առանձին տարածաշրջանների մակարդակների համար պետք է կիրառել լանդշաֆտա-

[7] Տե՛ս Antipov A., Kravchenko V., Semenov Yu. et al., Landscape Planning: Tools and Experience in Implementation. Irkutsk, Sochava Institute of Geography SB RAS Publishers, 2006, էջ 29:

յին շրջանակային պլաններ: Համայնքների մակարդակներում խորհուրդ է տրվում կիրառել լանդշաֆտային պլանը: Համայնքի ավելի փոքր միավորների՝ բնակավայրերի համար կարելի է օգտագործել «կանաչ» պլանը, որը նախատեսվում է լանդշաֆտային պլանի առավել որոշակիացման համար:

Լանդշաֆտային պլանավորման ստորադասության մեջ, սկսած լանդշաֆտային ծրագրից, յուրաքանչյուր հաջորդ մակարդակ, ելնելով նախորդի դրույթներից, դրա հատուկ շարունակությունն է և առարկայական է դարձնում այդ ծրագիրը: Տարբեր մակարդակների լանդշաֆտային պլանները՝ ըստ մարզի, տարածաշրջանի, համայնքի և բնակավայրի, ամբողջացնում ու հստակեցնում են բնության պահպանության և տարածքի համաչափ ու կայուն զարգացման նպատակները:

Ճյուղային պլանների ու ծրագրերի մշակման ժամանակ, «Էկոլոգիական փորձաքննություն մասին» ՀՀ օրենքի համաձայն, անհրաժեշտ է կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն ու գնահատում, որոնց նպատակն է տարածքի կառուցապատման կամ բնօգտագործման դեպքում շրջակա միջավայրի վրա վտանգավոր ազդեցությունների կրճատումն ու փոխհատուցումը[8]: Թեպետ այս ընթացակարգերը վերաբերում են առանձին օբյեկտների, պլանների ու ծրագրերի, բայց դրանց գլխավոր խնդիրն ամբողջությամբ հենց բնության պահպանությունն է:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ամբողջ տարածքում բնության պահպանության ընդհանուր հայեցակարգի չափանիշները, որոնց համար լավագույնը լանդշաֆտային պլանավորումն է: Տարբեր պլանների ու ծրագրերի կազմման ժամանակ կարող են օգտագործվել բազմաբնույթ տվյալներ ու տեղեկատվություն, բայց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար խորհուրդ է տրվում չափանիշները վերցնել լանդշաֆտային պլանավորման համապատասխան գործիքից: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար իրավական հիմքերի ձևակերպման ժամանակ կարելի է օգտագործել լանդշաֆտային պլանավորումը, որը կարող է կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրավական պահանջների էական մասը:

Տարածքի զարգացման ընդհանուր պլանների ու ծրագրերի կազմման ժամանակ լանդշաֆտային ծրագրի, լանդշաֆտային շրջանակային պլանի, լանդշաֆտային պլանի և «կանաչ» պլանի վաղ օգտագործումը հնարավորություն է տալիս ամբողջապես ու հիմնովին լուծելու էկոլոգիական տարաձայնությունները: Եթե լանդշաֆտային պլանի հատուկ տեղեկատվությունը հաշվի է առնվում սկզբնական փուլում, ապա այդ դեպքում հնարավոր է լինում խնայել ժամանակ ու միջոցներ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փոխհատուցման համար լանդշաֆտային պլանավորումը նույնպես առաջարկում է հիմնական անհրաժեշտ հայեցակարգ, որը բխում է առարկայական ու հատուկ պահանջներից: Լանդշաֆտային պլանավորման մեջ նշված զարգացման նպատակների ու շրջակա միջավայրի որակի բարելավմանն ուղղված խնդիրների օգնությամբ կարելի է պարզել՝ համատեղելի են արդյոք պլանը, ծրագիրը կամ օբյեկտն ու դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հենց այդ նպատակներով ու խնդիրներով: Լանդշաֆտային պլանավոր-

---

[8] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=93148

ման արդյունքների առկայությունն անհրաժեշտ նախադրյալ է ազդեցությունների կարևորության գնահատման համար: Լանդշաֆտային պլանավորման այս առավելությունները կարող են գործել ոչ միայն պլանների ու ծրագրերի կազմման դեպքում, այլ նաև առանձին օբյեկտների կառուցման ու բնօգտագործման թույլտվությունների ձևակերպման ժամանակ: Թույլտվությունների տրամադրման գործընթացում լանդշաֆտային պլանավորման առկայությունը կարող է լրացուցիչ օժանդակել, որ փոխազդեցություններին առավել մեծ ուշադրություն դարձվի, իսկ ծրագրում կարևոր տեղ զբաղեցնի էկոլոգիական գործոնը:

Լանդշաֆտային պլանավորման տեղեկատվությունն ու գնահատման չափանիշները լավ կողմնորոշում են նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության այլ գործիքների հարցում: Տարածքների օգտագործման պլաններում, որոնց համար ստեղծվում են լանդշաֆտային պլաններ, պարզորոշ հաշվառում են ավելի շատ բնապահպանական նպատակներ, քան համապատասխան լանդշաֆտային պլան չունեցող տարածքներում, և որքան բարդ է լանդշաֆտային պլանի կառուցվածքը, բնության պահպանության ու բարելավման ավելի շատ նպատակներ են ներառվում տարածքի օգտագործման պլաններում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաների, սահմանների և գոտիավորման՝ կենսաբազմազանության պահպանման, բնական, մշակութային ու հողային ռեսուրսների օգտագործման իրավական ապահովման և այլ բաղադրիչների կառավարման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար օգտագործվում է լանդշաֆտային պլանավորման մեթոդը: Այս մեթոդի գլխավոր սկզբունքն է գույքագրման արդյունքների գնահատումն ըստ նշանակության և զգայունակության, որի վերջնարդյունքն արտահայտվում է տարածքի զարգացման համալիր նպատակների հայեցակարգում: Որպես ասվածի օրինակ հոդվածում դիտարկվել է «Արևիք» ազգային պարկի առաջարկվող գոտևորման սխեման, որը կատարել ենք լանդշաֆտային պլանավորման մեթոդաբանությամբ:

Նշանակության ներքո գնահատված է ազգային պարկի բնության բաղադրիչների օգտագործման նպատակային գործառույթների իրականացման համար անհրաժեշտ էկոլոգիական վիճակի համապատասխանության աստիճանը, որը յուրաքանչյուր բաղադրիչի համար որոշված է որոշակի չափանիշներով:

Զգայունակության ներքո գնահատված են բնական գործընթացների համար ոչ բնութագրական և գլխավորապես մարդածին գործոնների ազդեցությամբ բնության բաղադրիչների առանձնահատկություններն ու վիճակի հարաշարժ բնութագիրը փոխելու հնարավորությունը: Յուրաքանչյուր բաղադրիչի համար զգայունակության գնահատման չափանիշներն ընտրվել են՝ օգտագործման նպատակային գործառույթներից ելնելով:

Պայմանավորված ուսումնասիրվող տարածքի լանդշաֆտային առանձնահատկություններով և պահպանության նշանակությամբ՝ կատարվել է հողերի ու կենսավայրերի գնահատում, որը թույլ է տվել տարանջատել ազգային պարկի գործառնական գոտիները հիմնավորված սահմաններով[9]: Ուսում-

[9] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166

նասիրման արդյունքում գնահատվել և քարտեզագրվել է ժամանակակից հողօգտագործումը (քարտեզ 1), որը թույլ է տալիս հիմնավոր ձևով տալ տարածքի նպատակային օգտագործման ձևերն ու եղանակները և մշակել հետագա զարգացման միջոցառումները, որոնք անհրաժեշտաբար պետք է ներառվեն ազգային պարկի կառավարման պլանում:

Հողերի նշանակության գնահատումն իրականացվել է՝ օգտագործման նպատակային գործառույթներից ելնելով: Բնական բուսածածկով տարածքների համար որպես նշանակության գնահատման չափանիշ օգտագործվել է բուսական համակեցությունների բնական կենսարդյունավետության պահպանման հատկությունը: Անտառային տարածքների համար որպես արդյունավետության ցուցանիշ օգտագործվել է անտառի բոնիտետը: Գյուղատնտեսական օգտագործման հողերի համար հաշվի է առնվել բերրիությունը: Հողերի որակական գնահատումը կատարվել է հողատեսքերի բնութագրերի հիման վրա, որոնք սերտորեն կապված են արդյունավետության հետ և պայմանավորում են հողերի բոնիտետը: Գնահատված են նաև ծայրահեղ պայմաններով տեղամասերը՝ զառիթափ լանջերը, քարքարոտ և անապատացված տարածքները, որոնք գրեթե զուրկ են հողաբուսական ծածկույթից: Հողերի նշանակության գնահատման ընթացքում օգտագործվել են հողերի ջրաջերմային պայմանները, հանքայնացումը և մեխանիկական կառուցվածքը հաշվի առնող ցուցանիշներ: Հողերի նշանակության գնահատման համար առանձնացվել է երեք աստիճան՝ բարձր, միջին և ցածր (քարտեզ 2):

Բարձր նշանակության հողերն անտառածածկ տարածքներ են, որտեղ առկա է հումուսի արտահայտված շերտ և արժեքավոր լանդշաֆտ:

Միջին նշանակության հողեր են համարվել գյուղատնտեսական տարածքները, որոնք ունեն որոշակի բերրիություն և օգտագործման որոշակի նպատակ:

Ցածր նշանակություն տրվել է քարքարոտ, էրոզացված և աղտոտված տարածքներին:

Հողերի զգայունակությունը գնահատվել է հողի կազմն ու կառուցվածքը խախտող ժամանակակից արտաքին գործընթացներն արտահայտող չափանիշների միջոցով. որպես տվյալներ օգտագործվել են հողաշինական նյութերը: Դիտարկվող տարածքում այս գործընթացներն ի հայտ են գալիս հողի մշակման ագրոտեխնիկական ձևերի խախտման կամ էլ հանքարդյունաբերության հետևանքով: Մի շարք դեպքերում հողային ծածկի խախտումն առաջանում է չափից շատ հանգստացողների, անտառային հրդեհների, անտառահատման, գերարածեցման հետևանքով: Հողերի զգայունակության հիմնական չափանիշ է համարվել ժամանակակից հողաքայքայման արտաքին բնական գործընթացների ազդեցության աստիճանը: Հողերի զգայունակության աստիճանը, հաստատվել է երեք որակական մակարդակներով (քարտեզ 2).

- զգայունակության բարձր աստիճան հաստատվել է հողի բնական կառուցվածքն ամբողջությամբ քայքայված տարածքներում,
- զգայունակության միջին աստիճան հաստատվել է հողերի կառուցվածքի և տարրերի մասնակի փոփոխություններ ունեցած տեղամասերում,



Քարտեզ 1. *«Արևիք» ազգային պարկի ժամանակակից հողօգտագործումը (հեղինակ՝ Ն. Հարությունյան)*



Քարտեզ 2. ***Հողերի գնահատումն ըստ զգայունակության և նշանակության (հեղինակ՝ Ն.Հարությունյան)***

- զգայունակության ցածր աստիճանը հաստատվել է արտածին գործընթացների ազդեցության ներքո հողերի բնական կազմն ու կառուցվածքը, բերրիությունը և այլ հատկությունները պահպանած տարածքներում:

Հողերի նպատակային օգտագործման մշակումն իրականացվել է գնահատման փուլի նյութերի հենքի վրա: Տարանջատված է հողերի նպատակային օգտագործման երեք տեսակ՝ պահպանություն, զարգացում և վերականգնում, որոնք էլ ունեն հողօգտագործման իրենց ենթանպատակները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հողօգտագործման ենթանպատակների առանձնացումը

Գնահատումը		Նշանակություն		
		Բարձր	Միջին	Ցածր
Զգայունակություն	**Բարձր**	Պահպանում (հրաժարում օգտագործումից)	Պահպանում (էքստենսիվ օգտագործում)	Վերականգնում (պահպանում)
	Միջին	Զարգացում (էքստենսիվ օգտագործում)	Զարգացում (էքստենսիվ օգտագործում)	Վերականգնում (էքստենսիվ զարգացում)
	Ցածր	Զարգացում (ինտենսիվ օգտագործում)	Զարգացում (ինտենսիվ օգտագործում)	Վերականգնում (էքստենսիվ զարգացում)

Կենսավայրերի նշանակության գնահատման ժամանակ քննարկվել են.

- կենսաբազմազանության հազվագյուտ տեսակների կենտրոնացման վայրերը,
- կենսաբազմազանության հազվագյուտ տեսակների տարածման գոտիներից դուրս գտնվող կենսավայրերը,
- կենդանական աշխարհի համար հեշտ հասանելի գյուղատնտեսական հողահանդակները և բնակավայրերի շրջակայքը, ամառային արոտավայրերն ու անասունների ջրելու վայրերը:

Կենսավայրերի նշանակության գնահատումն իրականացվել է բույսերի և կենդանիների հազվագյուտ, ռելիկտային, էնդեմիկ տեսակների արեալների (տարածասահման) տեղորոշմամբ, որոնցում հաշվի են առնվել բուսածածկի կառուցվածքային առանձնահատկությունները, տարածքում համապատասխան տեղամասերի առատությունն ու տեղաբաշխումը, ինչպես նաև կենդանիների կազմն ու դրանց զարգացումը: Ըստ նշանակության՝ կենսավայրերը ստորակարգվել են երեք խմբի (քարտեզ 3).

- բարձր նշանակության, որտեղ ներուժային և գոյություն ունեցող պայմանները գրեթե համընկնում են,
- միջին նշանակության, որոնցում բնական միջավայրի գոյություն ունեցող վիճակը մոտենում է իր ներուժին,
- ցածր նշանակության, որտեղ միջավայրի ժամանակակից վիճակը չի համապատասխանում ներուժին:

Կենսավայրերի զգայունակությունը, կենսահամակեցությունների տարածման արեալների իրական վիճակով պայմանավորված, որոշվել է՝ ազդեցության հնարավոր հետևանքներից ելնելով: Առանձնացվել են բարձր, միջին և ցածր զգայունակությամբ տեղամասեր (քարտեզ 3):



Քարտեզ 3. ***Կենսավայրերի գնահատումն ըստ զգայունակության և նշանակության (հեղինակ՝ Ն. Հարությունյան)***

Բարձր զգայունակության մեջ ներառվել են.

- կենսավայրեր, որոնցում կենսահամակեցությունների տեսակային կազմի մի մասն արեալների միջև մեծ խզվածության պատճառով կարող է ոչնչանալ,
- կենսավայրեր, որոնցում համակեցությունների որոշակի կենսաձևերը կարող են անհետանալ բնակեցման պայմանների վատթարացման պատճառով,
- կենսավայրեր, որոնցում կերային խոտաբույսերի պաշարը և որակը ենթադրում են գերարածեցման վտանգ:

Միջին զգայունակության մեջ ներառվել են.

- կենսավայրեր, որտեղ կենսահամակեցությունները վերականգնվում են կենդանիների գաղթի և բույսերի սերմերի տարածման շնորհիվ,
- հողային միջավայրը պահպանվում կամ փոփոխվում է կենսահամակեցությունների վերականգնողական տարիքային սուկցեսիայի հետևանքով:

Ցածր զգայունակության մեջ ներառվել են.

- կենսավայրեր, որոնցում հրդեհների ծագման և տարածման համար պայմաններն անբարենպաստ են,
- կենսավայրեր, որոնցում անապատացման և այլ վտանգավոր ազդակների հետևանքներն աննշան են:

Կենսավայրերի՝ ըստ նշանակության և զգայունակության գնահատման ինտեգրումը թույլ է տվել առանձնացնել տարածքի օգտագործման նպատակները: Ընդհանուր առմամբ, առանձնացվել են նպատակների երեք հիմնական տիպեր՝ պահպանում, զարգացում և վերականգնում (աղյուսակ 2):

Տարածքային զարգացման ճյուղային նպատակների և ինտեգրված հայեցակարգի մշակումն ու ներդրումը թույլ են տալիս սահմանափակել տարածքի օգտագործումը բնական միջավայրի պահպանության կամ սոցիալ-տնտեսական զարգացման համար, որոշել առավել խիստ էկոլոգիական հիմնախնդիրներով տարածքները և ցույց տալ դրանց վերականգնման ուղիները, ճշտել տարածքի զարգացման ուղղությունը և որոշակիացնել այդ զարգացման հենքային կառուցվածքը:

Աղյուսակ 2

Կենսավայրերի օգտագործման նպատակների տիպերի առանձնացումը

Գնահատումը		Նշանակություն		
		Բարձր	Միջին	Ցածր
Զգայունակություն	**Բարձր**	Պահպանում (հրաժարում օգտագործումից)	Պահպանում (հրաժարում օգտագործումից)	Վերականգնում (պահպանում)
	Միջին	Պահպանում (էքստենսիվ օգտագործում)	Զարգացում (էքստենսիվ օգտագործում)	Վերականգնում (զարգացում)
	Ցածր	Պահպանում (էքստենսիվ օգտագործում)	Զարգացում (էքստենսիվ օգտագործում)	Վերականգնում (զարգացում)

«Արևիք» ազգային պարկի զարգացման ճյուղային նպատակների և ինտեգրված հայեցակարգի մշակումն իրականացվել է գնահատման փուլի նյութերի հենքի վրա: Ճյուղային նպատակների շրջանակներում օգտագործված առանձին բնական բաղադրիչներն ու ինտեգրված հայեցակարգը տարան-

ջատված են գործողությունների և առաջնահերթ միջոցառումների հիմնական ուղղությունների՝ պահպանություն, զարգացում և վերականգնում (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Գործողություններն ու առաջնահերթ միջոցառումները

Հողերի գնահատումը		*Նշանակություն*		
		Բարձր	*Միջին*	*Ցածր*
Զգայունակություն	**Բարձր**	Պահպանում (հրաժարում օգտագործումից)	Պահպանում (հրաժարում օգտագործումից)	Վերականգնում (պահպանում)
	Միջին	Պահպանում (էքստենսիվ օգտագործում)	Զարգացում (էքստենսիվ օգտագործում)	Վերականգնում (զարգացում)
	Ցածր	Պահպանում (էքստենսիվ օգտագործում)	Զարգացում (ինտենսիվ օգտագործում)	Վերականգնում (զարգացում)

Տարածքային համաչափ և կայուն զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ առանձին բնական բաղադրիչների կամ միջավայրի օգտագործման նպատակների հետ, այդ իսկ նպատակների տեսակների օգտագործման ձևերը մեկ քարտեզի վրա միատեղման ուղիով, մշակվել է ամբողջական նպատակի հայեցակարգը: Արեալների չհամընկնելու դեպքում ճյուղային տեսակների նպատակների ամբողջացումը կատարվել է տարածքի զարգացման համար հիմնական նպատակների նշանակության տեսանկյունից. ըստ առաջնահերթության՝ նախապատվությունը տրվել է պահպանության նպատակին, այնուհետև՝ վերականգնմանը: Զարգացման համար նախատեսված են առաջին երկու խմբերում չընդգրկված տարածքները: Միաժամանակ, որպես կարևոր գործոն հաշվի է առնվել տարածքի նպատակային բաժանումն ըստ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների և ռեսուրսային առանձնահատկությունների: Առաջին պլանում ստացվում են տարածքային-որոշված, ինչպես նաև չափանիշային-որոշված սահմաններ (քարտեզ 4):

Եզրակացություններ: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ նշենք, որ լանդշաֆտային պլանավորման առաքելությունն է բացահայտել լանդշաֆտի հատկություններն ու գնահատել գործառույթները, մշակել բնության պահպանության և արդյունավետ բնօգտագործման վերաբերյալ հանձնարարականներ: Լանդշաֆտային պլանավորման մեջ բնության բաղադրիչների գնահատման ու պահպանման խնդիրների հետազոտման իմաստը դրանց՝ որպես ամբողջական համակարգի ներքին կազմակերպվածության և փոխադարձ կապերի պահպանության նախադրյալների ստեղծումն ու կենսունակության ապահովումն է:

Հողերի հիմնական գործառույթների պահպանումը պետք է կատարել հողմային և ջրային էրոզիաների կանխման, չափից շատ օգտագործման ու աղտոտման հակազդման միջոցով: Սա առավելապես վերաբերում է բարձր բնական բերրիությամբ օժտված հողատիպերին, հազվագյուտ և առանձնապես զգայուն ու խախտված հողերին: Հողերի առանձնահատկությունների և հողօգտագործման հետ միասին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ջրափոխանակման համակարգային փոխկապակցված գործընթացներին, այսինքն՝ ստորերկրյա ջրերի առաջացման գործընթացի պաշտպանությանը, դրանց որակի պահպանմանը, հողերի ինքնամաքրման ունակությանը և մակերևութային հոսքի կարգավորմանը:



Քարտեզ 4. ***Տարածքային զարգացման ինտեգրված նպատակները (հեղինակ՝ Ն.Հարությունյան)***

Օդի և կլիմայի մասով անհրաժեշտ է ապահովել մթնոլորտի պահպանությունն արտանետումներից՝ կանաչ տնկարկների ստեղծման ու պահպանման միջոցով, ինչպես նաև միկրոկլիմայական փոփոխությունների կարգավորումը՝ մաքուր և թարմ օդի ձևավորման արեալների ստեղծման ու պահպանման ճանապարհով, դրա «հոսքի» համար ուղիների ստեղծումը դեպի վատթարացած միկրոկլիմայով վայրեր:

Կենսաբազմազանության պաշտպանության և զարգացման պլանավորման խնդիրների շրջանակը կախված է լանդշաֆտի յուրահատուկ կենսաբաղադրիչի կառուցվածքի բացահայտումից և կենսավայրերի վիճակի գնահատումից: Կենսավայրերի ցանցի ստեղծմամբ անհրաժեշտ է աջակցել բույսերի ու կենդանիների կենսամիջավայրի զարգացմանը, որի միջուկները պետք է դառնան բավականին ընդարձակ բնական կամ բնականին մոտ կենսատարածքները: Կենսավայրերի ընդարձակ համակարգի համար ուղիներ է ապահովում լանդշաֆտային պլանավորումը: Վերջինիս պահանջների կատարումն իրականացվում է պլանավորողների, հողօգտագործողների և սեփականատերերի համատեղ ջանքերով:

Ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունը՝ հանգում ենք հետևյալին.

- լանդշաֆտային պլանավորումը երկրի արդյունավետ բնօգտագործման ու տարածքային կայուն զարգացման նպատակային ծրագրերի մշակման հիմնական գործիքներից մեկն է,
- լանդշաֆտային պլանավորումն օժտված է առանձին նախագծերի ազդեցության բնապահպանական գնահատման ու կարգավորման միջոցառումների ծրագրման գործառույթով,
- լանդշաֆտային պլանավորումը, որպես հրամայական ունենալով էկոլոգիապես անվտանգ բնամարդածին լանդշաֆտը, կարող է տարածքային պլանավորման գործընթացներն ավելի արդյունավետ դարձնել նախապես մշակված տարածքային զարգացման ճյուղային և ինտեգրված նպատակների, ինչպես նաև ծրագրված գործողությունների ու առաջնահերթ միջոցառումների միջոցով,
- բնապահպանական գերատեսչությունները, անկախ լանդշաֆտային պլանավորման մակարդակից, և՛ դրա կրողներն են, և՛ հասցեատերերը:

Օգտագործված գրականություն

1. Ландшафтное планирование для стран Южного Кавказа. Иркутск: Издательство Института географии им. В.Б. Сочавы СО РАН, 2008.
2. Haaren C.V., Galler C., Ott S., Landscape planning. The basis of sustainable landscape development, 2008.
3. Marsh W.M., Landscape Planning: environmental applications, 5 td Edition, 2010.
4. Antipov A., Kravchenko V., Semenov Yu. et al., Landscape Planning: Tools and Experience in Implementation. Irkutsk: Sochava Institute of Geography SB RAS Publishers, 2006.
5. http://www.irtek.am/views/act.aspx?aid=67114
6. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66853
7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166
8. https://www.arlis.am/documentview.aspx?docID=93148

НАРЕК АРУТЮНЯН
Доцент Егегнадзорского филиала АГЭУ,
кандидат географических наук

Природоохранный аспект ландшафтного планирования.– В статье рассматриваются вопросы охраны окружающей среды и экологически ориентированного планирования. В настоящее время человечество стоит перед рядом задач, среди которых отмечаются проблемы устойчивого экологического и социально-экономического развития. Для выбора путей устойчивого регионального развития необходима корректная оценка природно-ресурсного потенциала, экологических и социально-экономических условий территории с последующим определением возможных вариантов оптимизации землепользования и комплекса мероприятий по их реализации. В качестве инструментария планирования этого развития могут служить методические приемы ландшафтного планирования, совокупность которых применяется для построения пространственной организации деятельности общества в конкретных ландшафтах, обеспечивая устойчивое природопользование и сохранение основных функций этих ландшафтов как системы поддержания жизни. Кроме того, ландшафтное планирование является коммуникативным процессом, в который вовлекаются все субъекты природоохранной и хозяйственной деятельности на планируемой территории для того, чтобы выявить круг интересов природопользователей, проблемы природопользования, решение конфликтов и разработку согласованного плана действий и мероприятий. Следовательно, приобретают особую актуальность вопросы охраны окружающей среды и экологически предусмотрительного планирования, что выражается в контексте ландшафтного планирования.

Ключевые слова: *ландшафтное планирование, ландшафтная программа, ландшафтный рамочный план, ландшафтный план, зеленый план.*
JEL: Q00, Q50
DOI: 10.52174/1829-0280_2021_2_78

NAREK HARUTYUNYAN
Associate Professor of ASUE Yeghegnadzor Branch,
Doctor of Geography

Environmental Aspect of Landscape Planning.– This paper discusses the issues related to environmental protection and ecological oriented planning. Nowadays, the humanity faces a number of challenges, such as environmental problems and

problems concerning socio-economic sustainable development. Deciding on the ways through which sustainable regional development can be implemented requires a correct assessment of the natural-resource potential and of the ecological and socio-economic conditions of the target territory, with a subsequent determination of the possible optimization varieties for land use, and the package of measures for their implementation. The planning tools for this development may well include the procedural techniques of landscape planning which are used in combination with constructing the spatial organization of human activity in specific landscapes as a life sustenance system. Furthermore, landscape planning is a communicative process which involves all entities of nature conservancy and economic activities on the planning territory in order to provide the identification of the interests of nature management stakeholders, conflict settling, and the development of an agreed plan of actions and measures. Therefore, the issues regarding environmental protection and ecologically prudent planning, which is expressed in the context of landscape planning, become especially topical.

Key words: *landscape planning, landscape programme, landscape master plan, landscape plan, green plan.*
JEL: Q01, Q24
DOI: 10.52174/1829-0280_2021_2_78